ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողի պաշտոնային դրույքաչափի փոփոխության մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Սոցիալական աջակցության մասին>> օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջից, համաձայն որի 2017 թվականի հունվարի 1-ից տարածքային մարմինների համայնքային ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական աշխատավարձը սահմանվում է տարածքային մարմինների քաղաքացիական ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական աշխատավարձին հավասար չափով: Տարածքային մարմինների քաղաքացիական ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների աշխատավարձը կազմում է 176000 դրամ: Ներկացված որոշման նախագծով առաջարկվում է Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողի պաշտոնային դրույքաչափը սահմանել 176000 դրամ և աշխատակազմի հաստիքացուցակում կատարեռլ համապատասխան փոփոխություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողի պաշտոնային դրույքաչափի փոփոխության կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողի պաշտոնային դրույքաչափի փոփոխության որոշումը ենթադրում է բյուջեի ծախսերի ավելացում տարեկան 408.0 հազար դրամ: